



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ.
ՀՀ ԲՆԱՊԱՌԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«08» 11 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ

ԲՓ 97

Ձեռնարկողը՝

«ՄՀԵՐ ԵՎ ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ

գ. Գայ, Սարյան 1 փող. գուն 11

Գործունեությունը՝

ԳԱՅ-1 ավազակոպճային խառնուրդի երևակումում
2017-18 թթ կադարձելիք երկրաբանահետախուզական
աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ
ՀՀ Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՃՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԹԻՎ ԲՓ 97

<<08>> 11 2017թ.

**«Արմավիրի մարզի ԳԱՅ-1 ավագակոպճային խառնուրդի երևակումում
2017-18 թթ կադարձելիք երկրաբանահետախուզական
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ»**

Հեռարկող՝

«Մ հեր և Տիգրան» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Դրակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ և կից փաստաթղթեր

Գործունեության կատեգորիա՝

<<Q>>

Գտնվելու վայրը՝

ՀՀ Արմավիրի մարզ

ՀՀ Արմավիրի մարզի ԳԱՅ-1 ավագակոպաճային խառնուրդի հանքերևակման տարածքում որոնողական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական զնահատման հայտը մշակվել է շրջակա միջավայրի հնարավոր բացասական ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և գործունեության ազդեցության վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ստանալու նպատակով:

Աշխատանքների իրականացման նպատակն է երկրաբանահետախուզական աշխատանքներով ուսումնասիրել երևակման ավագակոպճային խառնորդը, որպես՝ շինարարական խճի և ավազի, ինչպես նաև ճանապարհաշինարարական պատառահումքի արտադրության հումք, ըստ ՀՍՏԳՕԾ 8267-95 «Խճի և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» և ՀՍՏԳՕԾ 8736-95 «Ավագ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջների:

ՀՀ Արմավիրի մարզի ԳԱՅ-1 ավագակոպճային խառնուրդի երևակման 2017-2018թթ.կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների ծրագիրը կազմվել է ըստ «ՄՀԵՐ ԵՎ ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ-ի կողմից տրված երկրաբանական առաջադրանքի՝ նպատակ ունենալով երկրաբանական ուսումնասիրության միջոցով իրեն տրամադրված նոտ 1.0հա մակերեսի վրա պարզելու ավագակոպճային խառնուրդի որակական հատկությունները, հետազայտմ այնտեղ լցանութերի հումքի արդյունահանճան աշխատանքներ կազմակերպելու համար:

Երևակման ավագակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի և ավագի, ինչպես նաև ճանապարհաշինարարական պասպառակումքի արտադրության համար: Երևակման օգտակար հանածոն իր որակական հատկություններով պետք է բավարարի ՀԱՏ ՌՕԾ 8267-95 «Խճի և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» և ՀԱՏՐՕԾ 8736-95 «Ավագ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջներին համապատասխան վերջնարդադրանքների ստացումը:

Chrysanthemum Slaty opposite Meeh



Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն երկրաբանահնույթային երթուղիների, հետախուզահորերի անցման և համապատասխան նմուշարկման աշխատանքների համալիրով:

ԳԱՅ-1 ավագակոպճային խառնուրդի երևակումը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի տարածքում, Գայ գյուղից 2.3կմ. դեպի հյուսիս-արևելք, Հովտաշեն գյուղից 0.63կմ. դեպի հարավ, հապավ՝ արևմուտք: Տեղամասի քացարձակ նիշերը տատանվում են 830-831մ սահմաններում:

Ծրջանի գլխավոր ջրային զարկերակը հանդիսանում է Արարս գետը:

Ծրջանի կիման ցամաքային է և բնութագրվում է շոգ ամառով ու մեղմ ձմեռով: Օդի ջերմաստիճանը ամռանը հասնում է մինչև +38°C, իսկ ձմռանը՝ մինչև -18°C: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 350 մմ-ը:

ՀՀ Արմավիրի մարզի ԳԱՅ-1 ավագակոպճային խառնուրդի երևակումում 2017-18թ Երևակման տեղամասը ծագումնաբանորեն կապված է Արարատյան հարթավայրի Արարս գետի առաջին վերհունային դարավանդի նստվածքային առաջացումների հետ:

ԱԿԽ-ի երևակման հետախուզման մեթոդիկան ընտրվել է ելեկտրո երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրված տարածքի չափերից, օգտակար հանածոյի ենթադրվող հզորությունից, ինչպես նաև հաշվի առնելով «Ավագի և կոպճի հանքավայրերի նկատմամբ պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» ցուցումները:

Երևակման տարածքի երկրաբանական կառուցվածքի ճշտման, քարտեզագրման նպատակով նախատեսվում է 1.0հա մակերեսով տարածքում կատարել երկրաբանահնույթային աշխատանքներ: Երևակման 1:1000 մասշտարի երկրաբանական քարտեզի կազմման համար անհրաժեշտ երկրաբանական երթուղիների ընդհանուր երկարությունը կկազմի 0.5 կմ:

Օգտակար հանածոյի մարմնի եզրագծման, ուսումնասիրման և նմուշարկման նպատակով նախատեսվում է հետախուզահորերի անցում: Այդ աշխատանքները կիրականացվեն մեխանիկական եղանակով՝ էքսկավատորով V կարգի ամրության ապարներում, 30մ ընդհանուր ծավալով:

Նախատեսվում է 6 հետախուզահորերի անցում, որոնց խորությունը նախատեսվում է 5.0մ, կտրվածքը՝ 1.5մ²:

Երկրաբանական փաստագրումից և նմուշարկումից հետո հետախուզահորերը ենթակա են լցման, որը նախատեսվում է իրականացնել ճեղքով: Լցման աշխատանքների ընդհանուր ծավալը վերցվում է 45մ³:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտարով: Այդ աշխատանքների ծավալը նախատեսվում է 30.0մ:

Նախատեսվում է հետախուզահորերի անցման ընթացքում, դաշտային պայմաններում երեք կետում որոշել բնամասում ԱԿԽ-ի ծավալային զանգվածը, ինչպես նաև հումքի փիրեցման գործակիցը:

Ավագակոպճային խառնուրդը նախատեսվում է ուսումնասիրել որպես հումք շինարարական խճի և ավագի արտադրության համար:

Օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է վերցնել նմուշներ հետախուզահորերից:

Նախատեսվում է վերցնել 6 նմուշ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար, 3 նմուշ քիմիական անալիզների և 3 նմուշ միներալոգ-պետրոգրաֆիկական ուսումնասիրությունների համար: Նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով՝ օգտակար հանածոյի ամրող հզորությամբ, ակոսի կտրվածքը՝ 0.3x0.1մ չափերով: Ցուրաքանչյուր նմուշի կշիռը բազմափուլ կրծատումից հետո նախատեսվում է հասցնել 30կգ-ի:

Վերցված նմուշները կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լիվ ցիկլով) փորձարկումների մասնագիտացված լաբորատորիայում:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն-հիգիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Ավագակոպճային խառնուրդի տեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրման նպատակով նախատեսվում է հետազոտվող երևակման տարածքից կատարել փորձնական հանույթ մոտ 300մ³ ծավալով: Նշված տեխնոլոգիական նմուշը կենթարկվի վերամշակման

պատվիրատուի ջարդիչ-տեսակավորման արտադրամասում, որի ընթացքում կմշակվի ավազակոպճային խառնուրդի հարստացման տեխնոլոգիան, կճշտվի ԱԿԽ-ի գրանուլումետրիական կազմը: Աշխատանքների ընթացքում կատարված ծախսերի և վերջնարտադրանքի (վացված ավազ, կոպիճ) քանակի մասին ստացված տվյալները կդրվեն օբյեկտի արդյունաբերական գնահատման հիմքում: Փորձնական հանույթի կոնկրետ տեղը կորոշվի կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով: Վերոհիշյալ աշխատանքները նախատեսվում է իրականացնել մեխանիկական եղանակով:

Սույն ծրագրի կազմման նախապատրաստական փուլում կատարվել է երևակման տարածքի 1:1000 մասշտարի տոպոգրաֆիական հանույթ մոտ 1.0հա մակերեսով տարածքում: Նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կկատարվի վերոհիշյալ տոպոգրաֆիական հիմքի ճշգրտում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել երևակման ապագա շահագործման ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ, որը կիրականացվի հետախուզական փորվածքների անցման ընթացքում կատարվելիք դիտարկումներով: Անհրաժեշտության դեպքում վերոհիշյալ ուսումնասիրությունները կկատարվեն մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակելով:

Ավազակոպճային խառնուրդի երևակումում նախատեսված երկրաբանահետախուզական աշխատանքների և օգտակար հանածոյի լարորատոր ուսումնասիրությունների ավարտից հետո (դրական արդյունքների դեպքում), նախատեսվում են աշխատանոցային աշխատանքներ, որի ընթացքում:

- կանփոփեն և կիամակարգվեն դաշտային փաստացի երկրաբանական նյութերը, լարորատոր ուսումնասիրությունների արդյունքները,
- կտրվի հանքավայրի երկրաբանատնտեսագիտական գնահատականը,
- կկատարվի օգտակար հանածոյի պաշարների հաշվարկը,
- կկազմվի երկրաբանական հաշվետվություն՝ հանքավայրի երկրաբանատնտեսական գնահատմամբ և պաշարների հաշվարկմամբ:

Հողարուսական շերտի պահպանության նպատակով նախատեսվում է նախագծված հետախուզական փորվածքների (հետախուզահոր, փորձնական հանույթի բացահանք) անցման ժամանակ զգուշությամբ հանել հողի վերին շերտը՝ եթե այն առկա է և պահեստավորել: Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել ռեկուլտիվացիոն աշխատանքներ և պահեստավորված հողաշերտով վերականգնել լանդշաֆտը: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 50000 դրամ գումար:

Հետախուզման նման եղանակը շրջակա միջավայրի վրա բնապահպանական տեսակետից կունենա թույլ ազդեցություն: Հետախուզական աշխատանքները նախատեսվում են իրականացնել հաշվի առնելով ընդերքի և շրջակա միջավայրի պահպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջները: Հետախուզական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված նախատեսվել են հետևյալ միջոցառումները:

- Հանքերևակումում և ավտոճանապարհների վրա մթնոլորտային օդի մաքրության պարբերաբար հսկողություն:

- Փոշեգրկման նպատակով արտադրական գոտիներում (հորատիրապարակներ, ճանապարհներ) ջրման աշխատանքների իրականացում:
- Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:



Հետախուզության ժամանակ թափոնակույտեր չեն առաջանա և լրացուցիչ տարածքներ չեն գրադարձվում: Ստորև բերվում է բնապահպանական միջոցառումների ծրագիրը:

Տրանսպորտային միջոցների աշխատանքի ժամանակ հնարավոր է ծխագագերի և անօրգանական փոշու արտանետումներ, որոնց նվազեցման համար նախատեսվում է իրականացնել մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, շարժիչների աշխատանքի կարգավորում, արտանետման խողովակների վրա զտիչների տեղադրում:

Օգտագործված յուղերից, վառելիքի թափվածքից, հորատման պոլիմերային լուծույթից հողերի աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է դրանք կուտակել անջրաթափանց տակառներում: Հողերի աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է տարեկան երկու անգամ իրականացնել հողերի նմուշառում:

Հետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հորատիրապարակների տարածքի ռեկուլտիվացիա: Այդ նպատակով իրականացվելու է հորատիրապարակների և մոտեցման ճանապարհների հարթեցում, որից հետո կատարվելու է նախապես հատուկ վայրերում պահեստավորված (պոլիէթիլենային թաղանթով ծածկված, որը կբացահանդիսավոր է հողերի տարրալվացում, հողմնահարում) հողի բերրի կամ պոտենցիալ բերրի շերտի փոռում, ճմապատում:

Նշված աշխատանքների համար շրջակա միջավայրի պահպանության դրամագիսին կատարվելու են հատկացումներ << օրենսդրության պահանջներին համապատասխան:

Եզրակացումներ. Ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր, տեղային, թույլատրելի նորմերի սահմաններում: Նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կնվազեցնեն գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելեկով տարածքի յուրահատկությունից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումներին և սոցալ-տնտեսական ծրագրին, իսկ դրանց չքավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Որոնղաետախուզական աշխատանքների իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառման նպատակով անհրաժեշտ է ուղղողութել << կառավարության 2015թ. հունվարի 20-ի N 64-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով, << կառավարության N 57-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինաղբի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄՀԵՐ և ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի ԳԱՅ-1 ավազակոպճային խառնուրդի երևակումում 2017-18թթ կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝

2. Զուտնայան

